17.09.2026թ.

«Նվիրում ենք գրքեր Սոս Ջանիբեկյանի մակագրությամբ» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում Վիճակահանությունը հնարավորություն է ընձեռում մասնակիցներին (այսուհետ՝ Մասնակից) ստանալու ստորև նշված երեք գրքերից մեկը՝ Սոս Ջանիբեկյանի մակագրությամբ.
   Հեսսե – «Տափաստանի գայլը»
   Կամյու – «Օտարը»
   Էլիֆ Շաֆաք – «Ստամբուլի բիճը»

3. Վիճակահանությանը կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձինք, որոնք Վիճակահանության ժամկետի ընթացքում՝ 2026թ. հուլիսի 17-ից Երևանի ժամանակով 00:01-ից մինչև 2026թ. հուլիսի 22-ը Երևանի ժամանակով ժամը 23:59 ներառյալ.
   - Բանկի տելեգրամյան @AmeriaStudent ուսանողական ալիքում վիճակահանության հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ գրելով իրենց սիրելի գրքի անունը:

4. Վիճակախաղի՝ 3-րդ կետում նշված ամբողջ ժամանակահատվածում Մասնակցի մեկնաբանությունը ալիքում պետք է լինի տեսանելի:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. հուլիսի 23-ին՝ Երևանի ժամանակով ժամը՝ 16:00-ին:
6. Մրցույթի հաղթողները կհայտարարվեն @AmeriaStudent ուսանողական ալիքում էկրանի տեսագրության (screen recording) միջոցով: Ընդ որում, Վիճակահանության մասնակցության դեպքում Մասնակիցը տալիս է իր համաձայնությունը Մասնակցի անունը, ազգանունը, ինչպես նաև տելեգրամյան էջը հրապարակելու վերաբերյալ:
7. Վիճակահանության հաղթող կճանաչվեն այն 3 Մասնակիցները, ում անունները պատահականության սկզբունքով՝ Comment picker գործիքի միջոցով կընտրվեն Վիճակահանության ամփոփման ընթացքում:

8. Հաղթող Մասնակիցների հետ Բանկը.....լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:
9. Մրցանակը ստանալու համար հաղթող Մասնակիցն անձամբ պետք է մոտենա Բանկի «Կամար» մասնաճյուղ (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2, «Կամար» բիզնես

կենտրոն)՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ մինչև 01.09.2026թ. ժամը 17:00 ներառյալ:

10. Նշված ժամկետում չներկայանալու դեպքում հաղթող ճանաչված Մասնակիցը զրկվելու է իր Մրցանակից, եթե մինչև սույն պայմանների 9-րդ կետում նշված ժամկետի լրանալը նախապես գրավոր չի համաձայնեցրել Բանկի հետ Մրցանակն ավելի ուշ ստանալու հնարավորությունը, ժամկետները և կարգը:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ 010 561111

www.ameriabank.am

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից